

# PIN կոդ

Մարտինն աշխատում է որպես համակարգչային ադմինիստրատոր մի խոշոր ձեռնարկությունում: Այդ ձեռնարկությունը վաղուց չի փոխել աշխատակիցների ինքնությունը ստուգելու համակարգը: Յուրաքանչյուր աշխատող ունի անձնական իդենտիֆիկացման քառանիշ համար (PIN կոդ): Ձեռնարկություն ներս մտնելու համար բավական է հավաքել PIN կոդը: Քանի որ տարիների ընթացքում ձեռնարկությունը մեծացել է, կոդում սկսեցին թվանշանների հետ մեկտեղ տառեր ևս օգտագործել, բայց կոդի երկարությունը չի փոխվել:

Մարտինին դուր չի գալիս այդ իրավիճակը: Ենթադրենք երկու մարդկանց կոդերն իրարից տարբերվում են միայն մեկ նիշով, օրինակ 61ab և 62ab: Եթե առաջին անձը պատահաբար 1-ի փոխարեն 2 հավաքի, համակարգը, միևնույն է, թույլ կտա ներս մտնել:

Մարտինը ցանկանում է վիճակագրություն հավաքել օգտագործվող PIN կոդերի վերաբերյալ, մասնավորապես, հաշվել, թե PIN կոդերի քանի զույգ կա, որոնք տարբերվում են իրարից 1, 2, 3, 4 դիրքերով: Նա կարծում է, որ այդ թվերը բավականաչափ համոզիչ կլինեն, որ ձեռնարկության տնօրենը ավելի լավ համակարգի համար միջոցներ ներդնի:

Տրված է PIN կոդերի ցուցակ և մի D ամբողջ թիվ: Հարկավոր է հաշվել PIN կոդերի այն զույգերի քանակը, որոնք իրարից տարբերվում են ճիշտ D դիրքերում:

## Մուտքը

Առաջին տողում տրված են PIN կոդերի  $N(2 \leq N \leq 50000)$  քանակը և  $D(1 \leq D \leq 4)$  թիվը: Հաջորդ N տողերից յուրաքանչյուրը պարունակում է մի PIN կոդ: Յուրաքանչյուր PIN կոդ բաղկացած է 4 սիմվոլից՝ թվանշաններից և 'a'-ից 'z' փոքրատառ լատիներեն տառերից: Մուտքում տրված բոլոր PIN կոդերն իրարից տարբեր են:

## Ելքը

Ելքում պետք է արտածել մի թիվ՝ PIN կոդերի այն զույգերի քանակը, որոնք տարբերվում են ճիշտ D դիրքերում:

## Օրինակ

### Մուտքը.

4 1  
0000  
a010  
0202  
a0e2

### Ելքը.

0

### Մուտքը.

4 2  
0000  
a010  
0202  
a0e2

**ԵԹՊ.**

3

Առաջին օրինակում PIN կոդերի յուրաքանչյուր զույգ տարբերվում են ավելի քան մեկ դիրքով:

Երկրորդ օրինակում կա 3 զույգ, որոնք տարբերվում են ճիշտ 2 դիրքերում. (0000,a010), (0000,0202), (a010,a0e2):

*Խնդիրը օգտագործվել է դպրոցականների 2012 թ. ընտրական մրցույթում:*